ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1951 *Общественные науки*

Խ. Բարսեղյան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌԵՎՈԼՈՒՑԻՈՆ ՊՐՈԿԼԱՄԱՑԻԱՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԱՍԻՆ

20-րդ դարի սկզբին Ռուսաստանը դառնում է համաշխարհային ռևոլուցիոն շարժման կենտրոնը, սոցիալիզմի ուղի հարթող երկիր։— «Պատմությունն այժմ մեր առջև դրել է մերձավորագույն մի խնդիր,— գրել է Վ. Ի. Լենինը,— որն ամենառևոլուցիոնն է հանդիսանում որևէ այլ երկրի պրոլետարիատի բոլոր մերձավորագույն խնդիրներից։ Այդ խնդրի իրականացումը, ո՛չ միայն եվրոպական, այլ նաև (կարող ենք մենք այժմ ասել) ասիական ռեակցիայի ամենահզոր նեցուկի խորտակումը ռուսական պրոլետարիատին կդարձներ միջազգային ռևոլուցիոն պրոլետարիատի ավանգարդը»։[1]

Ռուսաստանի պրոլետարիատը համաշխարհային պատմական այդ գերը կարող էր կատարել միայն այն դեպքում, եթե ունենար ռևոլուցիոն պարտիա, որը կազմակերպեր բանվոր դասակարգի պայքարը, հմտորեն ղեկավարեր նրա մարտերը՝ ցարիզմի և կապիտալիզմի տապալման համար։ Այդպիսի պարտիա հանդիսացավ Լենինի-Ստալինի պարտիան։

Վ. Ի. Լենինը, Ի. Վ. Ստալինը և նրանց մարտական զինակիցներն ու հավատարիմ աշակերտները մարքսիստական միասնական նոր տիպի պարտիա էին նախապատրաստում դեռևս հին «Իսկրա»-յի ժամանակներից։ «Նրանք այն նախապատրաստում էին համառորեն, հաստատակամորեն, չխնայելով և ոչ մի բան։ «Էկոնոմիստների», մենշևիկների, տրոցկիստների, օտզովիստների, ամեն գույնի իդեալիստների՝ ընդհուպ մինչև էմպիրիոկրիտիկների դեմ մղված պայքարի ամբողջ պատմությունը հենց այդպիսի պարտիայի նախապատրաստման պատմությունն էր։ Այդ նախապատրաստական աշխատանքում հիմնական և վճռական գեր խաղացին Լենինի այնպիսի աշխատությունները, ինչպես՝ «Ինչ անել», «Մի քայլ առաջ, երկու քայլ ետ», «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական ռևոլուցիայի մեջ», «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ»։[2]

Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը մշակեցին ռևոլուցիոն մարքսիստական պարտիա ստեղծելու ուսմունքը։ Մշակելով նոր տիպի պարտիայի գաղափարական, կազմակերպական, տակտիկական, թեորիական հիմունքները, Լենինը և Ստալինը մինչև արմատները մերկացրին օպորտունիզմի գաղափարական ակունքները և դխովին ջախջախեցին միջազգային և ռուսական օպորտունիստներին, երկրորդ ինտերնացիոնալի դավաճաններին։

Ինչպես Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ամբողջ պատմությունը, Անդրկովկասի ռևոլուցիոն ամբողջ շարժումները, այնպես էլ

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 492։
[2] Ի. Վ. Ստալին, Համառոտ կենսագրություն, էջ 51—52, Հայպետհրատ, Երևան։

լենինյան «Իսկրա»-յի ռևոլուցիոն սկզբունքների համար Անդրկովկասում մըղված պայքարը՝ նրա ծնունդ առնելու առաջին իսկ օրից՝ անխզելիորեն կապված է ընկեր Ստալինի գործունեության և անվան հետ։ Անդրկովկասի՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի լենինյան իսկրայական կազմակերպությունները ծագել և ձևավորվել են Ռուսաստանի բանվորական ռևոլուցիոն շարժումների ազդեցությամբ և նրա հետ անմիջականորեն կապված։

Անցյալ դարի վերջին քառորդում կապիտալիզմը սկսում է արագորեն զարգանալ Անդրկովկասում։ Դրան զուգընթաց աճում են բանվորական շարժումները։ «Ռուսական կապիտալիզմը,— գրել է Վ. Ի. Լենինը,— այդպիսով Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական պարփակվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, շուկա էր ստեղծում իր գործարանների համար։ Հետռեֆորմյան ժամանակաշրջանի սկզբին նոսր բնակված կամ համաշխարհային տնտեսությունից դուրս և նույնիսկ պատմությունից դուրս կանգնած լեռնականներով բնակված երկիրը դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի և ծխախոտի ֆաբրիկանտների երկիր...»[1] Երկաթուղիների և առաջին ֆաբրիկաների երևան գալով Կովկասում երևան եկավ նաև բանվոր դասակարգը։ Առանձնապես արագորեն զարգանում էր նավթային Բաքուն՝ Կովկասի արդյունաբերական և բանվորական խոշոր կենտրոնը։

1898—1900 թվականները շրջադարձային ժամանակաշրջան հանդիսացան Անդրկովկասի ժողովուրդների պատմության մեջ։ 1898 թվականի օգոստոսին ընկեր Ստալինը մտնում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի Թիֆլիսի կազմակերպության մեջ։ Ընկեր Ստալինի ղեկավարությամբ Անդրկովկասում ստեղծվում են լենինյան իսկրայական բոլշևիկյան կազմակերպություններ, ծավալվում են մասսայական ռևոլուցիոն բանվորական շարժումները։ «1898—1900 թ. թ. ժամանակաշրջանում,— գրել է ընկ. Լ. Բերիան,— առաջ եկավ ու ձևավորվեց Թիֆլիսի կազմակերպության ղեկավար կենտրոնական սոցիալ-դեմոկրատական խումբը... Թիֆլիսի կենտրոնական սոցիալ-դեմոկրատական խումբը հսկայական ռևոլուցիոն պրոպագանդիստական ու կազմակերպական աշխատանք կատարեց անլեգալ սոցիալ-դեմոկրատական պարտիական կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ»։[2]

Ընկեր Ստալինը գլխավորում էր այդ խումբը։ Ընկեր Ստալինը մինչև լենինյան «Իսկրան» «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» օրինակով Անդրկովկասում բարձրացրել էր մարքսիզմի դրոշը, լայն թափ հաղորդել ռևոլուցիոն թռուցիկների, պրոկլամացիաների և կոչերի հրատարակությանը։ Ռևոլուցիոն շարժման արշալույսին, ընդհատակի ծանր պայմաններում «Մեսամե դասի»-ի փոքրամասնությունը ընկեր Ստալինի գլխավորությամբ, պայքարելով ռևոլուցիոն մարքսիզմի ամեն տեսակ խեղաթյուրումների դեմ, հիմնավորում և պաշտպանում էր մարքսիզմի հիմունքները։ «Մեսամե դասի»-ի հենց այդ ռևոլուցիոն փոքրամասնությունն էլ դարձավ լենինյան իսկրայական ուղղության կորիզը Անդրկովկասում։ Երբ 1900 թվակա-

[1] Վ. Ի. Լենին, հատ. 3, հրատ. 3-րդ, էջ 674, Հայպետհրատ։

[2] Լ. Պ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, էջ 21—22, 1941 թ., Հայպետհրատ։

նի դեկտեմբերից սկսեց լույս տեսնել լենինյան «Իսկրան», ընկեր Ստալինը ամբողջովին կանգնեց նրա դիրքերի վրա, տոգորված անսահման հավատով դեպի Վ. Ի. Լենինի ռևոլուցիոն հանճարը, գնաց Լենինի ուղիով։ Անդրկովկասի ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատները սերտ կապ էին պահպանում Վ. Ի. Լենինի և լենինյան «Իսկրա»-յի հետ։ ՌՍԴԲՊ Թիֆլիսի, Բաքվի և Բաթումի Կոմիտեները իրենց կազմավորման առաջին իսկ օրից դարձան «Իսկրա»-յի կողմնակիցներ։ Ընկեր Ստալինի գլխավորած ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեն հանդիսացել է Վ. Ի. Լենինի և լենինյան «Իսկրա»-յի կայուն հենարանը։

«Մեսամե դասի»-ի ռևոլուցիոն փոքրամասնության ղեկավարությամբ, ընկեր Ստալինի առաջնորդությամբ Թիֆլիսում ծավալվող բանվորական շարժումը դուրս է գալիս բանվորական «աչքի ընկնող միավորների հետ» կատարվող հին, զուտ պրոպագանդիստական աշխատանքների շրջանակներից և առաջին պլանի վրա են մղվում ցարիզմի դեմ ուղղված թռուցիկների տարածումը, քաղաքական ագիտացիան ու ցույցերը։ Այսպիսով, Անդրկովկասի բանվոր դասակարգը՝ ընկեր Ստալինի ղեկավարած սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գլխավորությամբ ռևոլուցիոն շարժումներով է թևակոխում 20-րդ դարը, նրա արշալույսին բոցավառված լենինյան «Իսկրա»-յի ժամանակաշրջանը։

Լենինյան «Իսկրա»-յի ռևոլուցիոն սկզբունքների համար մղված պայքարի ընթացքում, ընկեր Ստալինը գլխավորել է կովկասյան բոլշևիկների ամբողջ դաղափարական-քաղաքական պայքարը՝ մենշևիկների, էսեռների, նացիոնալիստների, օպորտունիստների, անարխիստների դեմ։ Այդ պայքարում բոլշևիկների ամենաուժեղ զենքը պարտիական գրականությունն էր։ Ընկեր Ստալինը Կովկասի բոլշևիկյան բոլոր հրատարակությունների կազմակերպիչը, ոգեշնչողն ու նախաձեռնողն է եղել։ Լենինյան «Իսկրա»-յի գաղափարների հաղթանակն ապահովելու նպատակով, ընկեր Ստալինը ցարական Ռուսաստանի պայմաններում չտեսնված թափ է հաղորդում պրոկլամացիաների, անլեգալ գրքերի, թերթերի, բրոշյուրների հրատարակմանը։ Այն չափեր է ընդունում նաև թռուցիկների հրատարակումը բազմազգ Անկրկովկասի զանազան լեզուներով։ «Հիանալի գրված պրոկլամացիաները լույս էին տեսնում ռուսերեն, վրացերեն ու հայերեն լեզուներով և հեղեղում Թիֆլիսի բոլոր թաղամասերը»,— գրում էր լենինյան «Իսկրան»՝ Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատների գործունեության մասին։[1]

Ստալինյան պրոկլամացիաներն ու կոչերը ժամանակին տարածվել են ոչ միայն Անդրկովկասի՝ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի քաղաքներում, այլև գյուղերում, մարքսիստական ճշմարտությամբ տոգորել աշխատավոր մասսաներին, նրանց համախմբել պրոլետարական ռևոլուցիայի դրոշի ներքո։ Մինչև ռուսական առաջին ռևոլուցիան (1905—1907 թ. թ.), ՌՍԴԲՊ Թիֆլիսի, Բաթումի, Բաքվի Կոմիտեները, Կովկասյան Միութենական Կոմիտեն բազմաթիվ ռևոլուցիոն պրոկլամացիաներ ու կոչեր գրեցին և տարածեցին։ Այդ պրոկլամացիաները եռանդուն կերպով տարածվում էին նաև Հայաստանի աշխատավորության մեջ, կազմակերպում նրանց և պայքարի հանում տիրող կարգերի դեմ։ Հայաստանում մարքսիզմի տարածման գործում խոշոր դեր են կա-

[1] „Искра", № 23, 15 սեպտեմբերի, 1902 թ.։

տարել ստալինյան պրոկլամացիաներն ու թռուցիկները, թերթերն ու գրականությունը։ Վերջերս Հայկական ՍՍՌ Ազիզբեկովի շրջանի Մալիշկա գյուղում հայտնաբերվեց ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի և Կովկասյան Միութենական Կոմիտեի կողմից 1901, 1902 և 1904 թվականներին հրատարակված ինը պրոկլամացիա,[1] որոնցից մեկը ձեռագիր։

Նորահայտ պրոկլամացիաները խիստ արժեքավոր են և մեծապես կարող են օժանդակել Հայաստանում մարքսիզմի տարածման պատմության ուսումնասիրմանը։ Դրանք կրկին անգամ հաստատում են այն փաստը, որ Անդրկովկասի ռևոլուցիոն շարժումների արշալույսին ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի ռևոլուցիոն պրոկլամացիաները լայնորեն տարածվել են Անդրկովկասի բոլոր վայրերում, այդ թվում և գյուղերում։

Հայտնաբերված պրոկլամացիաների Մալիշկա բերվելու հարցը արժանի է հատուկ ուսումնասիրության։ Այդ առթիվ հին բոլշևիկ Գեորգի Նինուան գրել է. «Վինելով Թիֆլիսի բանվորների առաջին գործադուլների և մյուս կազմակերպված ելույթների, այդ թվում նաև 1901 թվականի ապրիլի 22-ին Թիֆլիսի փողոցներում տեղի ունեցած առաջին բացահայտ մասսայական մայիսմեկյան ցույցի մասնակիցը, ես հուզմունքով վերընթեռնում էի հայտնաբերված պրոկլամացիաների տեքստերը»։[2]

Ինչպե՞ս կարող էին այդ հեռավոր տարիներին ՌՍԴԲՊ Թիֆլիսի և Կովկասյան Միութենական կոմիտեների պրոկլամացիաները հասցվել նախառևոլուցիոն Հայաստանի գյուղերից մեկը։ Դա լիովին հասկանալի է, որովհետև ընկեր Ստալինը հատուկ ուշադրություն նվիրելով Անդրկովկասի ժողովուրդների լեզուներով անլեգալ ռևոլուցիոն գրականության հրատարակմանը, դրա հետ միասին ցույց էր տալիս այդ գրականությունը ամբողջ Անդրկովկասի քաղաքներում ու գյուղերում լայնորեն տարածելու նշանակությունը։ Ոչ քիչ թվով պրոկլամացիաներ և թռուցիկներ էին ուղարկվում Հայաստան, մասնավորապես Ալավերդու հանքերը։

Ընկեր Ստալինի ամուր, ուղղություն տվող ձեռքը այս գործում զգացվում էր յուրաքանչյուր քայլափոխից, ռևոլուցիոն ընդհատակի դժվարին պայմաններում լույս ընծայվող պրոկլամացիաների և թռուցիկների տարածման ամենափոքր մանրուքների մեջ։

Անլեգալ գրականության տարածմանը մեծ օգնություն էին ցույց տալիս Երկաթուղայինները, որոնց հիմնական մասսան խորապես նվիրված էր բանվոր դասակարգի գործին։ Բազմաթիվ անգամներ Թիֆլիսի կայարանում վագոնների կոնդուկտորները և ուղեկցողները ստանում էին մրգի զամբյուղների կամ որևէ այլ ձեռքի «ծանրոցի» մեջ խնամքով թաքցված պրոկլամացիաներ և թռուցիկներ ու դրանք բարեհաջող կերպով հասցնում էին նշված կայարանները և հանձնում «հասցեատերերին»։

Ստալինյան պրոկլամացիաները, որոնք Անդրկովկասի բանվորների և աշխատավոր գյուղացիության լայն մասսաներին համախմբեցին Լենինի մեծ դրոշի շուրջը, առանձնապես լայնորեն տարածվում էին Թիֆլիսի փողոցներում տեղի ունեցած առաջին բացահայտ մասսայական մայիսմեկյան ցույցի նա-

[1] Հայտնաբերված պրոկլամացիաները հանձնված են Համկ(բ)Պ Կենտկոմին կից Մարքսի-Էնգելսի-Լենինի ինստիտուտի հայկական ֆիլիալին։

[2] Խոսքը վերաբերում է „Коммунист" (Երևան) թերթի ս. թ. մարտի 13-ի համարում տպագրված մեր հոդվածին։ Խ. Բ.

խապատրաստման ժամանակաշրջանում և այն անմոռանալի դեպքից հետո, որի մասին լենինյան «Իսկրան» գրում էր, որ գա Կովկասում բացահայտ ռևոլուցիոն շարժման սկիզբն էր։ Այդ պատճառով էլ հասկանալի է, որ վերջերս Հայաստանում հայտնաբերված պրոկլամացիաներից մի քանիսը նվիրված են հենց այդ նշանակալից իրադարձությանը, 1901 թվականի ապրիլի 22-ի օրվան...»։[1]

Պրոկլամացիաներից չորսը ռուսերեն են, իսկ հինգը՝ հայերեն։ Ռուսերեն լեզվով տպագրված «Ընկերներ» պրոկլամացիաներից մեկը, որ հրատարակվել է 1901 թվականի հուլիսի 19-ին, նվիրված է Մետեխի բանտում գտնվող ռևոլուցիոներների նկատմամբ ժանդարմների ցուցաբերած սանձարձակություններին ու դաժանություններին։ Ռևոլուցիոն մարտիկների նկատմամբ իր դաժանություններով այդ ժամանակ հատկապես հայտնի էր ռոտմիստր Լավրովը։ Մարտական այդ պրոկլամացիան, որը ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի վաղ շրջանի գործերից է, բազմաթիվ փաստերով դիմակազերծ է անում Լավրովի լկտիությունները, նրան նշավակում իբրև ամենաանարգ և ստոր սրիկայի։

Ռոտմիստր Լավրովի գազանությունները ժամանակին մերկացվել են նաև Հայկական սոցիալ-դեմոկրատների Միության օրգան «Պրոլետարիատ» թերթի կողմից։ «Պրոլետարիատ» թերթի 1902 թվականի հոկտեմբերի համարի «Ներքին տեսություն» բաժնում ասված է.

«Այժմ դառնանք Կովկասին. գյուղական անկարգությունների մասին մենք վերևը խոսեցինք։ Այս տարվա ընթացքում այստեղ եղան երկու լուրջ և հաջող փողոցային անկարգություններ՝ Բաթումում և Բաքվում։ Կովկասում դեռ նոր է սկսվում բանվորական շարժումը. և սակայն մենք համոզված ենք, որ շնորհիվ կապիտալիզմի արագ զարգացմանը շատ շուտով այդ շարժումը և՛ խոշոր և հեղափոխական կերպարանք է ստանալու։ Կովկասյան իշխանությունը ներկայումս արդեն սարսափահարած է և դժոխային ծրագրեր է կազմում այդ շարժումը կանգնեցնելու համար։ Այն միջոցները, որ նա ձեռք է առնում, ավելի տակամարդկային են, քան թե այն բոլորը, ինչ որ ձեռնարկվում են Ռուսիայի խորքերում։ Այսպես, օրինակ, այստեղի գաղտնի ոստիկանության պարագլուխ ռոտմիստր Լավրովը ամեն տեսակ ստոր, կոպիտ և խիստ միջոցներ է գործադրում բանտարկյալների վրա։ Ծեծել, հարհոլել, սպառնալ և շարշարել՝ 10—12 ժամ ոտի վրա պահելով— այս գազանի սովորական միջոցներն են կազմում։ Լսեցինք, որ բազմաթիվ գանգատներ են ներկայացրել պրոկուրորին սորա վրա։ Ժանդարմների եռանդը ոչ մի չափ ու սահման չունի։ Նոքա այնպես են կատաղել, որ պատրաստ են կալանավորներին սաղ-սաղ թաղել գերեզմանում։ Այսպես, օրինակ, այս ամառը մարդկության այդ դահիճները տախտակել էին քաղաքական հանցավորների պատուհանները և երբ այս վերջինները փշրեցին այդ պատնեշները, դահիճները նորից տախտակեցին և մինչև անդամ կարմիր գույնով ներկեցին։ Եվ հասարակության լավագույն մասը գիտե դորա մասին, տեսնում է, թե ինչպես այդ դահիճները տանջում են, առանց լույսի և օդի թողնում իրենց քաղաքացիներին և... լռում։ Ամոթալի երևույթ»։[2]

Մի այլ պրոկլամացիա, որը հրապարակվել է 1901 թվականի օգոստոսի 10-ին, նվիրված է Թիֆլիսի երկաթուղայինների 1900 թվականի օգոստոսի

[1] Գեորգի Նինոյա։ Տպագիր պրոպագանդայի մեծ ուժը (Նամակ Թբիլիսիից) „Коммунист" № 103 (5120) 3 V—51 թ. Երևան։

[2] «Պրոլետարիատ», 1902 թ., հոկտեմբեր, № 13.

14-ի գործադուլին։ Վրաստանի և Անդրկովկասի ռևոլուցիոն շարժումների արշալույսին, ընկեր Ստալինի ղեկավարությամբ Մ. Ի. Կալինինի ակտիվ մասնակցությամբ Թիֆլիսի երկաթուղայինները 1900 թվականի օգոստոսի 14-ին կազմակերպեցին քաղաքական հուժկու գործադուլ։ Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցների 4000 բանվորներ աշխատանքը դադարեցնելով, պահանջեցին կառավարությունից բանվորական օրը կրճատել մինչև 8 ժամ, ավելացնել աշխատավարձը, բարելավել իրենց պայմանները։ Գործադուլը տևեց 15 օր, որի ընթացքում բացահայտ կերպով դրսևորվեց Անդրկովկասի ռևոլուցիոն պրոլետարիատի կամքը։ Սարսափահար ցարական գործակալները արյունոտ դատաստան էին տեսնում գործադուլավորների նկատմամբ։ Ձերբակալված բանվորների կանայք կազմակերպեցին ցույց։ Դա Անդրկովկասում առաջին ցույցն էր կանանց կողմից։ 1900 թվականի օգոստոսին կազմակերպված այդ գործադուլը ցույց տվեց, որ Անդրկովկասյան բանվորները ընկեր Ստալինի ջանքերի շնորհիվ քաղաքականապես հասունացել էին և գիտակցում էին իրենց դասակարգային շահերը։ Գործադուլը ընդլայնեց և խորացրեց դասակարգային պայքարը և Անդրկովկասի բանվորներին անմիջականորեն ներգրավեց Ռուսաստանի ռևոլուցիոն շարժման մեջ։

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի Թիֆլիսի կոմիտեի 1901 թվականի օգոստոսյան պրոկլամացիան ցույց է տալիս Թիֆլիսի երկաթուղայինների քաղաքական այդ գործադուլի նշանակությունը և նրա պարտության պատճառները։ Այդ պրոկլամացիան տոգորված է Վ. Ի. Լենինի՝ «Իսկրա» թերթի 1900 թվականի առաջին համարում տպագրված «Մեր շարժման կենսական խնդիրները» խորագրով առաջնորդողի գաղափարներով։ Վ. Ի. Լենինի հիշատակված առաջնորդող հոդվածում նշվում է, որ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մերձավորագույն քաղաքական խնդիրն է՝ ինքնակալության տապալումը, քաղաքական ազատության նվաճումը։ Լենինյան հռչակավոր առաջնորդողը վերջանում է հետևյալ մարտական կոչով. «Մեր առաջ իր ամբողջ ուժով կանգնած է թշնամու ամրոցը, որտեղից մեր գլխին ռումբերի և զնդակների տարափ է տեղում, խլելով մեր լավագույն մարտիկների կյանքը։ Մենք պետք է գրավենք այդ ամրոցը և մենք կգրավենք այն, եթե արթնացող պրոլետարիատի բոլոր ուժերը միացնենք ռուս ռևոլուցիոնիրների բոլոր ուժերին և դարձնենք մի պարտիա, որին կձգտի այն ամենը, ինչ Ռուսաստանում կենդանի է, ու ազնիվ։ Եվ այդ ժամանակ միայն կկատարվի ռուսական բանվոր ռևոլուցիոներ Պյոտր Ալեքսեևի այն մեծ մարգարեությունը, թե «կբարձրանա սրբազնավոր բանվոր մարդկանց մկանուտ ձեռքը, և զինվորների սվիններով պաշտպանված դեսպոտիզմի լուծը փոշեցրիվ կլինի»։[1]

ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի պրոկլամացիան ավարտվում է այսպես. «Առաջ ուրեմն, ընկերնե՛ր, դեպի պայքար, հանուն երջանիկ և ազատ ապրելու իրավունքի։

Հաղթանակը հեռու չէ, բանվորական հզոր շարժման ալիքը հեղեղել է Ռուսաստանը։

Միավորվեցե՛ք ուրեմն, կազմակերպվեցեք միությունների, դրամարկղների մեջ, և այն ժամանակ արագորեն կիրագործվեն առաջին մարտնչող բանվոր Պյոտր Ալեքսեևի խոսքերը, որը դատարանում բացագանչեց. «Երբ կբարձրանա

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 477, 4-րդ հրատ., Հայպետհրատ։

բանվորի մկանուտ ձեռքը, այն ժամանակ հոգս կյանդի դեսպոտիզմի լուծը, որը պահպանվում է զինվորական սվիններով»։[1]

ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի պրոկլամացիաները բանվորներին կոչ էին անում նորանոր մարտերի, մերկացնում էին ցարիզմի դաժան քաղաքականությունը, բանվորներին սովորեցնում ցարական կարգերի դեմ համարձակ կերպով պայքարելու արվեստը։

Ռևոլուցիոն մարտական ոգով են տոգորված ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի՝ «Հասարակությանը» պրոկլամացիան և Միութենական Կոմիտեի՝ «Պահեստայիններին» կոչը։

«Հասարակությանը» պրոկլամացիան մերկացնում է ցարական կառավարության մեքենայություններն ու դաժանությունները, աշխատավոր մասսաներին հավատ է ներշնչում հանուն հաղթանակի։

«... Ինքնակալությունը երկար չի ապրի,— ասված է պրոկլամացիայում,— նրա քայքայվող դիակի վրա պրոլետարիատի հզոր ձեռքը բարձրացրել է պայքարի դրոշը, որի վրա գրված է՝ «Ազատություն, արդարություն, հավասարություն»։ Ռուսաստանի բոլոր ծայրերից դեպի այդ դրոշներն էին գալիս միլիոնավոր ճնշվածներ ու զրկվածներ, որոնք ծարավ են թշնամու արյան, վառվում են վրեժի կրակով և պատրաստ են կռվել մինչև իրենց երակների վերջին կաթիլը։ Քաղաքացինե՛ր. հեռու չէ այն ժամանակը, երբ ինքնակալության բոլոր թշնամիները, որոնք այժմ գործում են բաժան-բաժան, բանվորների առաջնորդությամբ կկանգնեն մեկ ռևոլուցիոն բանակի կուռ շարքերում և այն ժամանակ... այն ժամանակ Սուլթան Նիկոլայ 2-րդը և նրա Ռալիցին փաշաները չեն խուսափի Լյուդովիկոս 16-րդի ճակատագրից։ Քաղաքացինե՛ր. ցարական բաշիբուզուկներին ապացուցեք, որ դուք ոչ մի գնով չեք վաճառի ձեր խիղճն ու մարդկային իրավունքները, ինչպես այդ անում են նրանք։ Բաց մի թողեք չինովնիկական կամայականության դեմ բողոքելու ոչ մի դեպք, և դուք արժանի կերպով վարձահատույց կլինեք վերահաս ռևոլուցիայի կողմից։

Կեցցե՞ այդ ռևոլուցիան։ Կորչի՛ ինքնակալությունը։ Կեցցե՞ Բաղամական և դեմոկրատական Կոնստիտուցիան»։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միության Կոմիտեի «Պահեստայիններին» կոչը վերաբերում է ռուս-ճապոնական պատերազմին։ «19-րդ դարի վերջերից իմպերիալիստական պետությունները ուժեղ պայքար սկսեցին խաղաղ օվկիանոսի վրա գերիշխելու, Չինաստանը բաժանելու համար։ Այդ պայքարին մասնակցում էր նաև ցարական Ռուսաստանը»։[2]

Ցարական կառավարությունը հույս ուներ պատերազմի օգնությամբ ամրացնել իր քաղաքական գրությունը, կանգնեցնել ռևոլուցիայի ալիքը։ Ցարիզմը պատերազմի ճակատներն էր նետում ռևոլուցիոն մարտիկներին, նպատակ ունենալով ոչնչացնել նրանց։

Կովկասյան Միութենական Կոմիտեն մերկացնում էր ցարիզմի այդ դիվային պլանները։ «Պահեստայիններին» կոչը դրա փայլուն ապացույցներից է։

ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի հայերեն լեզվով բաց թողած անլեգալ պրոկլամացիաներից երկուսը սկսում են «Ընկերներ», իսկ մեկը՝ «Բանվոր ընկերներ» տողերով։ Այդ երեք պրոկլամացիաների հրատարակման ժամանակը չի

---

[1] Պրոկլամացիայում այսպես է։ Խ. Ի.։

[2] ՀամԿ(բ)Պ պատմություն։ Համառոտ դասընթաց։ էջ 73, Հայպետհրատ, 1950 թ.։

հիշատակված։ Մեր ուսումնասիրությունները բերեցին այն համոզման, որ ինչպես այդ պրոկլամացիաները, այնպես էլ «Բանվոր» բանաստեղծություն-թռուցիկը (բանաստեղծության տակ նշված է 1902 թ. 12-ին նոյեմբ.) հրատարակվել են 1902 թվականի երկրորդ կեսին և տպագրվել են միևնույն տպարանում։ Ի դեպ, այդ նույն տառերով է տպագրվել Հայ սոցիալ-դեմոկրատների Միության օրգան «Պրոլետարիատ» թերթը։

Հայերեն հրատարակված պրոկլամացիաներից երկուսը նվիրված են Թիֆլիսի բանվորների 1901 թվականի մայիսմեկյան ցույցին։ Թիֆլիսի բանվորների մայիսմեկյան ցույցը Անդրկովկասի լենինյան-իսկրայականների եռանդուն նախապատրաստության, «Մեսամե դասի»-ի մեծամասնության դեմ նրանց մղած անհաշտ պայքարի արդյունք էր։ Այն բանվոր դասակարգի ռևոլուցիոն պայքարի նշանավոր օրինակ էր։

Մայիսմեկյան ցույցը վիթխարի նշանակություն ունեցավ ամբողջ Կովկասի համար։ Լենինյան «Իսկրա»-ն այդ ցույցը գնահատել է որպես ամբողջ Կովկասի համար պատմական նշանակություն ունեցող մի իրադարձություն։

ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի «Ընկերներ» պրոկլամացիան, որը նվիրված է մայիսմեկյան ցույցին, արժեքավոր փաստաթուղթ է. «Ապրիլի 22-ը այն օրն է,— ասված է պրոկլամացիայում,— երբ առաջին անգամ Թիֆլիսում հնչեց բողոքի ձայնը, երբ հինավուրց քաղաքին առաջին անգամ վիճակվեց տեսնել բանվոր պրոլետարիատի կարմիր դրոշակը և հազարավոր ուժեղ (կարող) կրծքերից լսել. «Կորչի կամայականությունը, կորչի միապետությունը» խոսքերը։

1902 թվականի նոյեմբերի 21-ին, երբ կառավարությունը էտապով աքսոր էր ուղարկում Թիֆլիսի մայիսմեկյան ցույցի ժամանակ ձերբակալվածներին, հարյուրավոր բանվորներ հավաքվել էին կայարանում՝ ճանապարհելու իրենց հարազատ ընկերներին։ Այդ առթիվ ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեն ռուսերեն, վրացերեն և հայերեն լեզուներով տարածեց՝ «Բանվոր ընկերներ» պրոկլամացիան, որտեղ ասված է.

«Ապրիլի 22-ի ցուցարարներին հայտարարված է, որ Հայրենիքից աքսորվում են... բանվորներ, դուք տեսնում եք, թե ինչպես անխղճորեն է վերաբերվում դեպի մեզ կառավարությունը, թե ինչպիսի տմարդի միջոցներով է կամենում խեղդել մեր մեջ արթնացող մարդկային արժանիքի գիտակցությունը ու ձգտում վերածնել ճորտությունը... Թո՛ղ մեզ աքսորեն, թո՛ղ մեզ պատժեն, այդ մեզ չի ընկճի, նոքա մեզ չեն կանգնեցնի և ճանապարհից շեղի։ Հիշենք, որ մեզ հետ է ճշմարտությունը, մեզ հետ է ամբողջ բանվորական Կովկասը և Ռուսիան... Կեցցե՜ ազատությունը։ Կորչի բռնակալությունը»։

ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի հիշատակված նշանավոր պրոկլամացիան ժամանակին տարածվել է Անդրկովկասում։

«Ընկերներ» տողերով սկսվող մյուս պրոկլամացիան հավանաբար հրատարակվել և տարածվել է 1902 թվականի հունիս-հուլիս ամիսներին։ Մեր ենթադրությունը հաստատվում է նրանով, որ հենց նույն պրոկլամացիայում ասված է. «Ո՞ւմ հայտնի չէ, թե ինչ դաղանությամբ մեր կառավարությունը պատժեց Ռոտշիլդի բանվորներին մի 3—4 ամիս առաջ տեղի ունեցած գործադուլի ժամանակ։ Բայց չնայած այդ վայրենի պատիժներին, ինքը Ռոտշիլդը— բոլոր երկրների բանվորների այդ անկուշտ վամպիրը— մի ամիս առաջ իրեն հրապարակով ճանաչեց հաղթված, իսկ մեզ մի ավելորդ անգամ էլ համոզեց, որ ոչինչ են բոլոր իրիստ միջոցները կռվելիս բանվորների միացյալ ուժերի հետ»։

Բերված քաղվածքը բացի Ռոտշիլդին մերկացնելուց, հաստատում է մեր ենթադրությունը այդ պրոկլամացիայի հրապարակման տարեթվի վերաբերյալ, որովհետև հայտնի է, որ 1902 թվականի մարտի 9-ին ընկեր Ստալինն է կազմակերպել Բաթումի Ռոտշիլդի և Մանթաշևի գործարանների, նավահանգստի, երկաթուղու և այլ ձեռնարկությունների բանվորների վիթխարի ցույցը, որին մասնակցել է մոտ 6 հազար մարդ։ Այդ ցույցի մասին դրել է լենինյան «Իսկրան» իր 1902 թ. հոկտեմբերի 15-ի № 26-ում։

Ընկեր Ստալինը գլխավորելով Բաթումի բանվորների պայքարը «... այդ օրերին հսկայական քաղաքական աշխատանք է կատարում, պրոկլամացիաներ, լոզունգներ է գրում, կազմակերպում է նրանց տպագրումը անլեգալ տպարանում և տարածումը Բաթումի բանվորների շրջանում, ինչպես նաև առաքում Վրաստանի ամենամոտիկ շրջանները (Դուրիա, Իմերեթիա, Մենգրելիա)։

Առանձնապես լայն էր տարածվել Բաթումի 1902 թ. մարտի 9-ի դեպքերի առթիվ ընկեր Ստալինի գրած պրոկլամացիան, որը բանվորներին և գյուղացիներին կոչ էր անում ռևոլուցիոն պայքարի ելնել ցարիզմը տապալելու համար»։[1]

«Բանվոր» բանաստեղծությունը աչքի է ընկնում իր հակացարական ոգով և արտահայտում է ռևոլուցիոն հաստատակամություն։ Չնայած այդ բանաստեղծության տակ հրատարակության վայրը ցույց է տրված Լոնդոնը, բայց մեր կարծիքով գա միայն կոնսպիրատիվ նշանակություն ունի։ Այն տպագրվել է «Պրոլետարիատ» թերթի տպարանում։ «Պրոլետարիատը» հիմնադրել են Ստ. Շահումյանը, Բ. Կնունյացը և ուրիշներ։ «Պրոլետարիատը» նույնպես իր ճիշտ հասցեն կոնսպիրատիվ նպատակներով չի նշել, այլ գրել է այսպես. «Թղթակցություններ, հոդվածներ, նամակներ Ռուսիայից խնդրում ենք ուղարկել արտասահմանի ձեր ծանոթներին, որպեսզի նոքա էլ կրկնակի ծրարով ուղարկեն հետևյալ հասցեով. (S. H. W. Dilfr wacht (S. M. D. H.) in Stutgart իսկ միջին ծրարի վրա գրել միայն «Իսկրա»-յին «Պրոլետարիատ»-ի համար»։[2]

«Բոլոր ռուս ազնիվ քաղաքացիներին» թռուցիկը, որը ձեռագիր է, կոչ է անում ռուս ժողովրդի լավագույն զավակներին եղբայրական ձեռք մեկնել ու միացյալ ուժերով պայքարել ցարական կարգերի դեմ։

ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի և Միութենական Կոմիտեի ինչպես այդ, այնպես էլ մյուս պրոկլամացիաների հրատարակմանը և տարածմանը ակտիվ կերպով մասնակցել են Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Հակոբ Հակոբյանը և ուրիշներ։

Պրոլետարական պոետ Հակոբ Հակոբյանը գրել է. «Դեպոյի բանվորները (խոսքը Թիֆլիսի դեպոյի մասին է— Խ. Բ.) ինձ խնդրեցին թարգմանել «Մարսելյոզը», որը որոշել էին մտցնել անլեգալ հրատարակվող Ս.-Դ.-ական թերթի մեջ, և ես այդ հանձնարարությունը կատարեցի հաջողությամբ. 1902 թվականին «Մարսելյոզը» տպվեց թռուցիկներով ու հազարավոր օրինակներով տարածվեց թե՛ Թիֆլիսում և թե՛ գավառներում։ Այդ երգը առաջին անգամն էր թարգմանվում հայերեն, առաջին անգամ լսվում հայերեն երգելիս...

Այնուհետև հետզհետե ծանոթացա Բոգդան Գնունու, Միխա Ցխակայայի, Շահումյանի հետ։

---

[1] Լ. Գ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, էջ՝ 32—33, Հայպետհրատ, 1946 թ.

[2] «Պրոլետարիատ» № 1, 1902 թ., հոկտեմբեր։

Ուրախությանս և եռանդիս չափ չկար, երբ իրար հետևից գիշերները թռուցիկներ էի թարգմանում մինչև լուսաբաց և մյուս օրը տեսնում տպագրված, երևկոյան մութին, երբ թևի տակ դրած, դեռ տպագրական ներկի թարմ բույրը վրան, բերում էր գաղտնի տպարանի գրաշարը։

Որսկան բազեների նման իսկույն վրա էինք տալիս, թափվում էինք թռուցիկների վրա՝ ես, Թագուհի Մելիք-Շահնազարյանը (որը զոհվեց 1905 թ. աղեաալի կոտորածի ժամանակ, օգոստոսի 29-ին քաղաքային Դումայի մոտ) ու տարածում էինք երեկոները՝ գործակատարներին, ցերեկը բանվորներին, տներում, գերեզմանատներում և այլն։

Այստեղ էր, որ հանդիպում էի մեր առասպելական Կամոյին»։[1]

Այսպիսով, քննարկվող պրոկլամացիաները աշխատավորների մեջ տարածվել են մարքսիստների, ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի պրոպագանդիստների, պրոֆեսիոնալ ռևոլուցիոներների միջոցով։ Նորահայտ պրոկլամացիաները, որոնց մեծ մասը սովետահայ մամուլում առաջին անգամն են հրապարակվում, չափազանց ուշագրավ են և հարուստ նյութ են տալիս մեր գիտական կադրերին, առանձնապես պատմաբաններին։

ՌՍԴԲՊ Թիֆլիսի և Կովկասյան Միութենական Կոմիտեի պրոկլամացիաները, ինչպես նաև անլեգալ մարքսիստական մամուլը, որը ստեղծվել է մեծ Ստալինի գլխավորած Անդրկովկասյան լենինյան իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ջանքերով, խոշոր գեր են կատարել Հայաստանի աշխատավորության մեջ մարքս-լենինյան գաղափարները տարածելու գործում։

Х. Барсегян

Из истории большевистской печати Закавказья

Новые материалы о распространении революционных прокламаций в Армении

Резюме

На заре создания марксистской партии рабочего класса товарищ Сталин возглавил всю идейную и политическую борьбу закавказских большевиков, отстаивая и обосновывая революционные принципы ленинской „Искры". В борьбе против меньшевиков, эсеров, националистов, анархистов, оппортунистов всех мастей самым сильным оружием большевиков была партийная печать. Товарищ Сталин был организатором, вдохновителем и инициатором всех большевистских изданий на Кавказе. В целях обеспечения победы идей ленинской „Искры", товарищ Сталин придал небывалый размах изданию прокламаций, нелегальных брошюр, газет на русском, грузинском и армянском языках. Сталинские прокламации и листовки быстро распространялись не только в городах, но и в селах.

Недавно в селе Малишка, Азизбековского района Армянской ССР, при перестройке одного старого дома были обнаружены девять замурованных в стене прокламаций Тифлисского и Кавказского Союзного комитетов РСДРП, выпущен-

[1] Հակոբ Հակոբյան, Երկեր, էջ, 349--350, Հայպետհրատ, Երևան, 1951 թ։

ных в 1901, 1902 и 1904 годах*. Выявленные материалы подтверждают тот факт, что прокламации Кавказского Союзного и Тифлисского комитетов РСДРП широко распространялись не только в Тифлисе, но и по всему Закавказью.

Четыре из обнаруженных прокламаций—на русском, пять—на армянском языках. Одна из прокламаций, „Товарищи!",—издана 19 июля 1901 года и посвящена разоблачению жестокого отношения жандармов к революционерам, заключенным в Метехском замке.

Другая прокламация, с тем же обращением, посвящена проведенной в августе 1901 года под руководством товарища Сталина забастовке тифлисских железнодорожников. Прокламация знакомила трудящихся Армении с первым крупным выступлением тифлисских железнодорожных рабочих и призывала к объединенному натиску на самодержавие.

Таким же боевым духом пронизаны прокламации Тифлисского комитета РСДРП „К обществу" и Союзного комитета РСДРП—„К запасным" на русском языке.

Из прокламаций Тифлисского комитета РСДРП, выпущенных на армянском языке, две начинаются обращением—„Товарищи!", одна—„Товарищи рабочие!" Эти три прокламации не датированы. Сопоставление их с листовкой-стихотворением „Рабочий", датированной 12 ноября 1902 года, приводит нас к заключению, что все они напечатаны в одной типографии. Кстати, тем же шрифтом напечатана газета „Пролетариат"—орган „Союза армянских социал-демократов РСДРП". В издании этой газеты и выпуске прокламаций непосредственное участие принимал, по возвращении в 1902 году в Тифлис, Ст. Шаумян.

Одна из прокламаций разъясняет значение празднования 1 мая и призывает рабочих сплотиться в ожидании предстоящих боев.

Прокламация „Товарищи рабочие!" посвящена той же первомайской демонстрации, организованной под руководством товарища Сталина в Тифлисе, 22 апреля 1901 года. В ней содержится протест против царского произвола и призыв к разгрому самодержавия.

Другая прокламация—„Товарищи!" очевидно издана и распространена в июне—июле 1902 года, что подтверждается текстом самой прокламации. Эта листовка знакомила рабочих и крестьян Армении с организованной под руководством товарища Сталина в марте 1902 года мощной демонстрацией рабочих Батуми.

Прокламация-стихотворение, озаглавленная „Рабочий", также отличается своей революционной целеустремленностью. Местом издания стихотворения, по-видимому, в целях конспирации, указан Лондон, но листок печатался в типографии газеты „Пролетариат".

Рассмотренные нами прокламации Тифлисского и Кавказского Союзного комитетов РСДРП на армянском и русском языках говорят о том, что пролетарские массы проходили стальную закалку в борьбе, и уже не было такого уголка в Закавказье, где бы не прозвучал призывный клич к борьбе за свободу. Эти прокламации, как и вся нелегальная революционная печать Закавказья, явились результатом кипучей деятельности созданных и руководимых товарищем Сталиным закавказских ленинско-сталинских социал-демократических организаций, сыгравших огромную роль в распространении идей марксизма-ленинизма среди трудящихся Армении.

---

* Найденные прокламации переданы архиву Армянского филиала Института Маркса-Энгельса-Ленина при ЦК ВКП(б).